ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N312

Կենցաղային աղբահանության ծառայությունների վճարովի մատուցման մասին

ք. Սևան « 5 » հունվարի 2026թ.

« Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում » ՀՈԱԿ , հետագայում՝ « Կատարող »

(ձեռնարկության անվանումը կամ ֆիզիկական անձի ա. ա. հ.)

ի դեմս տնօրեն Է.Հարությունյանի , որը գործում է ըստ կանոնադրության , մի կողմից և

(պաշտոնը , ա. ա. հ.) (կանոնադրության)

ՀՀ ՏԿԵ ... Տարածքային , հետագայում ՝ « Պատվիրատու », ի դեմս

ձեռնարկության անվանումը կամ ֆիզիկական անձի ա. ա.

... ... Ալեքսանյան որը գործում է ըստ ___________, մյուս կողմից

(պաշտոնը , ա. ա. հ.) (կանոնադրության)

սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել կենցաղային աղբահանության ծառայություններ (այսուհետ ծառայություններ ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2 Աշխատանքների կատարման ժամկետն է « 1 » 01 2026թ.,մինչև « 31 » 12 2026թ.

1.3 Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կողմից հաշիվ - ֆակտուրայի ստորագրման պահից:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավորվում է՝

ա) ծառայություններ մատուցել պատշաճ որակով,

բ) Պատվիրատուի պահանջով 5 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները

գ) անձամբ կատարել ծառայությունները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան ծառայությունների հաշիվ - ֆակտուրայի ստորագրման պահից 5 օրվա ընթացքում:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի `

ա) Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը:

բ)մինչև ակտի ստորագրումը ` ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց ` Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին:

## 3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Ծառայության գինը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ավագանու 18.11.2025թ. N 125-Ն որոշման , այն է վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1 քմ մակերեսի համար՝ 15 ՀՀ դրամ:

3.2 Սույն պայմանագրի գինը կազմում է 30000/երեսուն հազար դրամ մեկ տարվա համար:

3.3 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է ծառայությունները հանձնելուց հետո անմիջապես 10 օրվա ընթացքում:

3.5 Ծառայության մատուցման գնի փոփոխության դեպքում « Պատվիրատուն » գրավոր տեղեկացվում է փոփոխության մասին: Գնի փոփոխության վերաբերյալ գրավոր ծանուցումը համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը :

## 4. Այլ պայմաններ

4.1 Պայմանագրից դուրս ծագող հարցերը կարգավորվում են ՝ « Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » ՀՀ օրենքի, Քաղաքացիական օրենսգրքով , այլ իրավական ակտերով :

4.2 Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ :

4.3 Կողմերի հասցեներն ու վավերապայմանները `

| « Կատարող » | « Պատվիրատու » |
|---|---|
| «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում»ՀՈԱԿ | ՀՀ ՏԿԵ ... Տարածքային |
| Ք. Սևան , Շահումյան 7 | ... 129 |
| ՀՎՀՀ՝ 08624761 | գործ. հասցե ք. Սևան ... 178 |
| Հ/Հ 900165101628 | ՀՎՀՀ 00476409 |
| ՀՀ ՖՆ ԳՎ | ... Ալեքսանյան |
| ( ստորագրություն ) | ( ստորագրություն ) |
| Կ. Տ. | Կ. Տ. |